ՀԱՆԴԱԲԵՐԴԻ ՎԱՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Լյուբա Կիրակոսյան
ճարտարապետության թեկնածու
ԵՊՀ

Մինչև արցախյան շարժումը հայագիտությունը զրկված էր Արցախում ուսումնասիրություններ կատարելու հնարավորությունից: Ազատագրված Արցախում նմանատիպ ձեռնարկումները հասանելի դարձան, որոնց շարքում կարևոր էին 2004-2010 թթ. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արցախի արշավախմբի հետազոտություններն ազատագրված տարածքներում (Շուշի, Հանդաբերդ, Տիգրանակերտ): Մասնավորապես, Հանդաբերդի վանքում իրականացված պեղումները բարենպաստ միջոցառում էր Արցախի միջնադարյան մշակույթի ուսումնասիրության համար: Պեղումները կատարվել են 2004 և 2005 թթ. հուլիս-օգոստոս ամիսներին: Դրանք իրականացրել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արցախի արշավախումբը (ղեկավար պատմական գիտությունների դոկտոր Համլետ Պետրոսյան, հնագետներ, պատմական գիտությունների թեկնածուներ՝ Վարդգես Սաֆարյան (Արցախի պետական համալսարան) ու Տատյանա Վարդանեսովա (ԵՊՀ Պատմության թանգարան), ճարտարապետ, ճարտարապետության թեկնածու, դոցենտ՝ Լյուբա Կիրակոսյան (ԵՊՀ Հնագիտության գիտահետազոտական լաբորատորիա): Պեղումների շնորհիվ վանական համալիրն ամբողջությամբ բացվել է, որի պատմամշակութային հետազոտությունն արդեն ներկայացված է առանձին գրքով[1]: Բավարար հիմքեր են ստեղծվել նաև հուշարձանախմբի վերականգնման և միջավայրի բարեկարգման համար: Այս համալիրի վերականգնումը կլուծի ոչ միայն հուշարձանի պահպանության խնդիրը, այլև հազարավոր հայ վերաբնակիչների մեջ կամրապնդի իրենց ապրած տարածքների հայկականության մասին պատկերացումները և ստանձնելով հոգևոր կենտրոնի դերը իր շուրջը կխմբի նրանց:

Վանքը գտնվում է ԼՂՀ Նոր Շահումյանի (նախկին Քարվաճառ) շրջանում, որը 12-14-րդ դդ. մտնում էր Վերին Խաչենի կամ Ծարի իշխանության մեջ: Այն տեղադրված է Լևոնագետի միջնահովտի աջ ափի երկարությամբ ձգվող անտառապատ լեռնաբազկի մի գոգավորության կենտրոնով դեպի գետը ձգվող հովտի բարձրադիր ափի եզրին՝ ընդարձակ բացատի հարավարևելյան կողմում՝ Հանդաբերդ ամրոցից մոտ 1,0 կմ հյուսիս-

[1] *Հ.Պետրոսյան, Լ.Կիրակոսյան, Վ.Սաֆարյան,Հանդաբերդի վանքի պեղումները, Երևան, 2009:*

արևելք[1]: Տարածքը նախօրոք ենթարկվել է մշակման. ստեղծվել են հարավ-արևելքից դեպի հյուսիս-արևմուտք իջնող դարավանդ-հարթակներ, որոնց վրա էլ իրականացվել է կառուցապատումը: Այսօր՝ առաջին՝ վերին դարավանդի վրա դիտելի են կառույցների և առանձին պատերի հետքեր: Երկրորդ դարավանդի վրա կառուցված է շինությունների հիմնական խումբը՝ բաղկացած գլխավոր եկեղեցուց, նրան կից երկու մատուռներից, ժամատուն-գավթից՝ հյուսիսից կցված մատուռով և արևմուտքից կցված զանգակատնով, որոնցից հյուսիս, ստորին դարավանդի վրա տեղադրված են առանձին կանգնած հյուսիսային մատուռը, ամրապատը և տապանաբակը: Համալիրի շինությունների հիմնական մասը, ըստ շինարարական արձանագրության, 1276 թ. կառուցել է ոմն Դավիթ վարդապետը՝ տեղում գոյություն ունեցող ավելի հին եկեղեցու շուրջը: Հետագայում ավելացվել են նոր շինություններ:

Դեռևս 2005-2006 թթ. Հանդաբերդի վանքում իրականացվել են ամրակայման և մասնակի վերականգնման աշխատանքներ, որպեսզի կանխվեն հետագա փլուզումները[2]: Այդ աշխատանքների արդյունքում լրացվել են հյուսիսային և հարավային կցված մատուռների պատերի բացակայող մասերը, թաղածածկերը, որմնասյուները: Տեղում պահպանված փաստացի նյութերի հիման վրա կատարվել է որոշ հատվածների մասնակի վերականգնում: Վերականգնվել են մատուռների արևելյան պատուհանները: Հյուսիսային մատուռի պատուհանի պսակի քարը, որը գտնվել էր պեղումների ժամանակ, դրվել է իր տեղը: Երկու մատուռների ներսում էլ վերականգնվել են զույգ հորինվածքով որմնակամարները, որոնց վրա էլ նստել է թաղածածկը (նկ. 1): Վերականգնվել է հյուսիսային մատուռի մուտքի կամարը: Ամրակայման աշխատանքներ են կատարվել նաև ժամատանը: Ներսում՝ հյուսիսարևելյան անկյան ներքևի՝ խարխլված մասը քանդվել և վերաշարվել է, լրացվել է պատի մեջ բացված անցքը: Քանդվել և նորից կառուցվել է նույն անկյան վերևում որմնակամարի ձևափոխված և շաղախից անջատված հատվածը: Այս անկյունը վերականգնվել է նաև դրսից: Ժամատան թաղի պահպանված հատվածը ամրացնելու և պահպանելու համար թաղի տակ տեղադրվել են ժամանակավոր փայտյա

---

[1] *1985թ. Մուրադ Հասրաթյանը այցելել է վանք և իրականացրել համալիրի սխեմատիկ չափագրությունը: Համալիրի նախնական ներկայացումը տ'ես Սիմոնյան Հ., Սանամյան Հ., Հանդաբերդի վանական համալիրը //Հայաստանի Հանրապետությունում 1993-1995 թթ. հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված 10-րդ գիտական նստաշրջան, Զեկուցման թեզեր, Երևան, 1996, էջ 71-73: Առավել մանրամասն համալիրը նկարագրված է՝ Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999, էջ 24-30:*

[2] *Մասնակի վերականգնման նախագիծը մշակել են Լյուբա Կիրակոսյանը և Սամվել Այվազյանը: Աշխատանքներն իրականացրել են ճարտարապետ Սամվել Այվազյանն ու աշխղեկ Վոլոդյա Հարությունյանը:*

հենակներ: Այս միջոցառումը հրատապ էր, որովհետև ծածկի մեծ մասի կործանված լինելու պատճառով կորել էր թաղի կոնստրուկտիվ ամբողջականությունը և այն ցանկացած պահի կարող էր քանդվել: Ծածկի կործանմանը նպաստող պատճառներից մեկն էլ կարող էր լինել դրա ներքին և արտաքին հորինվածքների անհամապատասխանությունը, որի հետևանքով թաղի վրա առաջացել են կրաշաղախի ավելորդ զանգվածներ:

Այսօր արդեն, երբ պեղումներն ավարտվել են և առկա են վանական համալիրի գլխավոր հատակագծի մանրամասն վավերացումը, հուշարձանախմբի բոլոր կառույցների ճարտարապետական չափագրությունները, հորինվածքային և ծավալատարածական բացահայտումներն ու համալիրի պատմաճարտարապետական քննությունը, հնարավոր և անհրաժեշտ ենք համարում Հանդաբերդի վանքի վերականգնումը, որն ավելի քան իրատեսական է: Մինչդեռ ոչ հեռու անցյալում՝ խորհրդային տարիներին, հայ մշակույթի համալիրները հայտնվել էին այնպիսի իրավիճակում, որտեղ բացակայում էին հայկական հուշարձանների նկատմամբ բայրացկամ վերաբերմունքը, դրանց պահպանումն ու վերականգնումն իրականացնողների մասնագիտական պատրաստվածությունը և երևույթներն անկողմնակալ և գիտական տեսանկյունով մեկնաբանելու կարողությունը: Այսպիսի իրավիճակում քիչ չէին այն դեպքերը, երբ ճարտարապետական հուշարձանները ավերվում, եղծվում և «աղավաղված» վերանորոգումների էին ենթարկվում: Դրա վառ օրինակն է Վանքասարի վրա կառուցված Վաչագան Բարեպաշտի վաղքրիստոնեական խաչաձև կենտրոնագմբեթ եկեղեցին, որը ադրբեջանական վերակառուցման արդյունքում կանգուն է այն կերպարով, որն անհարիր է հուշարձանի նախնական՝ վաղքրիստոնեական հայկական այդ տիպի եկեղեցուն բնորոշ դասական հորինվածքին (նկ. 2):

Հանդաբերդի վանքի շինությունները մինչև պեղումներն ամբողջովին ծածկված էին փլատակների և հողի մինչև 2,0 մ հաստության շերտով, ծառերով և թփերով (նկ. 3): Պեղումները երևան են բերել վանքի կիսավեր կառույցները (նկ. 4): Առավել վատ են պահպանվել գլխավոր եկեղեցին և ժամատուն-գավիթը: Կառույցների ավերմանը նպաստել է նաև բնությունը: Առատ բուսականությունն աճել էր հուշարձանների ծածկերի վրա, քայքայել դրանք, արմատներով մխրճվել պատերի մեջ՝ լայն ճեղքեր ու ճաքեր առաջացնելով դրանցում:

Խորհրդային տարիներին ադրբեջանցիները վանական համալիրի համարյա մեջտեղով անց են կացրել մոտ 4,0 մ լայնությամբ և 2,0 մ խորությամբ ավտոճանապարհ, որը լիովին բացել է հիմնական խմբի կառույց-

ների հյուսիսային հիմքերը: Հուշարձանախմբի պահպանումն ապահովելու համար նախատեսվում են նաև հիմնական խմբի հյուսիսային մասում հենապատի կառուցում՝ հողաշերտի, նրա հետ միասին նաև կառույցների փլուզումից խուսափելու համար: Նույն կերպ էլ դեպի մոտակա անտառները տանող ավտոճանապարհը անց է կացվել վանքի շուրջը տարածվող միջնադարյան գերեզմանոցի մեջտեղով, որի հետևանքով ավերվել է մի ընդարձակ հատված: Որոշ տապանաքարեր ու խաչքարեր՝ տեղահան արվելով, սփռվել են ողջ տարածքով մեկ: Դրանց մի մասն էլ գլորվել է ձորը:

Հանդաբերդի վանքի համալիր հետազոտությունները հնարավորություն են տալիս ներկայացնել հուշարձանախմբի վերականգնման հայեցակարգը՝ այն է, ելնելով հուշարձանների հիմնական մասի պահպանվածության աստիճանից (բացառությամբ զանգակատան, որի երկրորդ հարկն ավերված է, գավիթ-ժամատան, որի ծածկը մասամբ առկա է և գլխավոր եկեղեցու, որի ծածկը նույնպես չի պահպանվել) կատարել ամբողջական վերականգնում՝ հնարավորինս նվազագույն միջամտությամբ: Զանգակատան և եկեղեցու համար առաջարկվում է նաև վերակառուցում և վերաստեղծում:

Հանդաբերդի վանքի կառույցների հիմնական խմբի ամենավաղ շինությունը **գլխավոր եկեղեցին** է, որը նաև այդ պատճառով ամենավատ պահպանվածն է: Այն արևելքից արևմուտք ձգված, արևելքում ուղղանկյուն խորանով ավարտվող միանավ դահլիճ է: Խորանն ունի եկեղեցու աղոթասրահի լայնությունը և նրանից անջատվում է որմնասյուներով, որոնց վրա առաջարկվում է բարձրացնել թաղակապ ծածկի կամարը: Երեք պատերում (բացի արևելյան բեմապատից) խորշեր են բացվել: Կամարակապ միակ մուտքը գավիթ-ժամատնից է և գտնվում է արևմտյան պատի համարյա կենտրոնում: Լուսամուտի միակ հնարավոր տեղը արևելյան ճակատն է, որը շատ վատ է պահպանված: Ինչպես գլխավոր եկեղեցուն կցված մատուռները, այնպես էլ ժամատանը հյուսիսից կից մատուռը արևելյան խորաններում ունեն դեպի դուրս նեղացումով լուսամուտի բացվածքներ, որոնք պահպանված են, հանգամանք, որը հնարավորություն է տալիս եկեղեցում էլ չբացառել այսպիսի բացվածքի գոյությունը: Եկեղեցու ծածկն ամբողջովին բացակայում է, բայց վերականգնելի, քանզի հյուսիսային և հարավային պատերի առավելագույն պահպանված բարձրությունները ժամատանը կից հատվածում՝ ծածկի մակարդակում կազմում են՝ 4,2 մ և թաղի բարձրությունը հավաստի վերականգնելի է: Եկեղեցին ունեցել է երկթեք՝ կղմինդրներով պատված ծածկ: Բեմի և աղոթասրահի հատակները սվաղված են կրաշաղախով: Սվաղված են եղել նաև եկեղեցու ներքին պատերը, որոնցից որոշ հատվածներ են պահպանվել: Նախա-

տեսվում է վերականգնել պատերի ներքին այդ հարդարանքը, բացառությամբ այն հատվածների, որոնք շարված են խաչակիր քարերով, որոնց երեսները չեն սվաղվում: Հատակի երկարակեցությունն ապահովելու համար առաջարկվում է սալապատում: Լուսամուտները պարզ պսակներով են:

Գլխավոր **եկեղեցուն կցված հարավային և հյուսիսային մատուռներն** ունեն նույնատիպ հատակագծային և ծավալատարածական լուծումներ: Դրանք արևելք-արևմուտք առանցքով ձգված, արևելակողմում ուղղանկյուն խորաններով թաղածածկ կառույցներ են, որոնք հիմնականում (մասնակի վնասվածությամբ) պահպանված են, որն էլ հնարավորություն է տալիս կատարել վերականգնումներ: Տանիքները միաթեք են, որոնց վերին՝ կղմինդրածածկույթը չի պահպանվել տեղում, սակայն ամբողջովին վերականգնելի է: Խորաններն աղոթասրահներից անջատվում են որմնասյուներով և դրանց վրա նստած թաղակապ ծածկի կամարով: Կամարային այս շրջանակը նաև թաղածածկին կոշտություն է հաղորդել: Հարավային մատուռի թաղը հարավային կողմում հենված է մատուռի պատի, իսկ հյուսիսում՝ գլխավոր եկեղեցու հարավային պատին կցված զույգ որմնակամարների վրա: Հյուսիսային մատուռի թաղը հարավային կողմում նստել է գլխավոր եկեղեցու հյուսիսային պատին կցված զույգ որմնակամարների վրա: Սակայն ի տարբերություն հարավային մատուռի, թաղը հյուսիսային մասում հենված է հյուսիսային պատին կցված զույգ կամարների վրա: Կոնստրուկտիվ այս համակարգը մասնակի վնասվածությամբ է պահպանվել և հավաստի վերականգնելի է: Մատուռների մուտքերը արևմտյան կողմից են: Հյուսիսային մատուռի մուտքի վրա շինարարական արձանագրությամբ բարավորի քար է դրված եղել, որի մի կեսն ընկած էր ժամատան ներսում, որը պիտի տեղադրվի նախնական տեղում:

Գլանաձև թաղերն իրականացվում են ուղղաձիգ դրված և աստիճանաբար առաջացող քարերի ու ամբողջ կոնստրուկցիան շաղկապող կրաշաղախի զանգվածով (գծ. 1):

Հանդաբերդի վանքի **գավիթ-ժամատունը** հատակագծում մոտավորապես քառակուսի է: Մուտք ունի ինչպես արևմտյան, այնպես էլ հարավային կողմում: Արևմտյան՝ կենտրոնական մուտքը այժմ բացվում է դեպի հետագայում կցված զանգակատուն և հաղորդակցվում վերջինիս հյուսիսային կողմում բացված կամարակապ մուտքի հետ: Երկրորդ մուտքը բացվել է հարավարևելյան անկյան մոտ՝ հարավային պատի կողմից: Ժամատան հարավային, հյուսիսային և արևմտյան ներքին պատերը հարդարված են սլաքաձև կամարակապ խորշերով: Հարավարևելյան խորշը համընկել է մուտքի հետ: Հյուսիսային խորշերը պահպանված են

ողջ՝ 2,7 մ բարձրությամբ: Ժամատան հատակը և ներքին պատերը սվաղված են կրաշաղախով, որը թափված մասերում վերականգնվում է: Շատ հետաքրքիր լուծում ունի ժամատուն-գավթի ծածկը: Ներսում՝ թաղի հորինվածքը ենթադրում է արտաքին քառալանջ տանիք, սակայն ժամատան հատակին ընկած ծածկի մեծածավալ բեկորը, տանիքի տեղում պահպանված հատվածը և ամբողջ համալիրի մանրամասն զննումը հնարավորություն են տալիս խոսել նրա նախնական ձևի մասին. իրականացվել է երկլանջ տանիք, որի վրա բարձրացել է գագաթում երդիկ ունեցող ցածր՝ ութանիստ թմբուկ ունեցող գմբեթը:

Այն կրկնում է անսյուն գավիթների՝ հատվող կամարների վրա հենվող ծածկերի ձևերը: Գմբեթատակ քառակուսին անկյուններում կառուցված կամարների միջոցով վեր է ածվել ութանկյան, վերջինիս վրա էլ հենվել է գագաթում երդիկ ունեցող «կեղծ» գմբեթը: Երդիկը ներսույթի լուսավորության միակ աղբյուրն է եղել, քանի որ բացակայել է դասական բարձր թմբուկը, որը կարող էր պատուհաններ ունենալ (գծ. 2):

Հյուսիսային կողմից ժամատանը կցված մատուռը միանավ թաղակապ սրահ է: Այն ունի պայտաձև հատակագծով խորան: Խորանի մեջ է բացվում դեպի դուրս նեղացումով փոքրիկ պատուհանը, որը մատուռի լուսավորության միակ աղբյուրն է: Խորանի հարավային պատը որմնախորշ ունի: Աղոթասրահը և խորանը ծածկված են սլաքաձև միասնական թաղով, որը հյուսիսային կողմում նստել է պատի վրա, իսկ հարավում՝ ժամատան պատին կցված հարթ որմնակամարի: Այն հավանաբար հետո է կցվել ժամատանը և անհրաժեշտություն է առաջացել դեպի ժամատուն մուտք բացել, որը ժամատուն-գավթի հյուսիսարևմտյան անկյունային խորշի մեջ է: Մատուռն ունի միաթեք ծածկ, պատերը ներսից սվաղված են կրաշաղախով: Համարյա ամբողջապես պահպանված է, վերականգնման ենթակա է կղմինդրածածկը:

Ինքնատիպ կառուցվածք ունեն Հանդաբերդի վանքի հիմնական խմբի շինությունների ծածկերը: Դրանք բաղկացած են թաղն արտաքինից անմիջապես պատող 10-15 սմ հաստության ամուր կրաշաղախե շերտից, որն իր հերթին «լցոնված» է կոտրտված կղմինդրների 2-3 շերտերով: Կղմինդրներն այստեղ երկրորդական կիրառության են և նախատեսված են ծածկը թեթևացնելու և ջրամեկուսացումը մեծացնելու համար: Օգտագործվել են ավելի վաղ կառույցներից վերցված ջարդոտված կղմինդրներ: Կրաշաղախե շերտն ավարտվել է ամբողջական կղմինդրների կանոնավոր ծածկույթով: Տեղում՝ գլխավոր եկեղեցուն հյուսիսից կցված մատուռի ծածկի վրա երևում են դրանց հետքերը միայն: Կղմինդրների ամբողջական օրինակներ չեն պահպանվել: Հանդաբերդի

վանական համալիրի ողջ տարածքից հավաքվել են կղմինդրների հազարից ավելի բեկորներ, որոնց ուսումնասիրությունից պարզվել է, որ այստեղ օգտագործվել են տափակ և փորակավոր կղմինդրներ: Տարածված է եղել նաև կղմինդրի մի հատուկ տեսակ, որը համատեղում է փորակավոր և տափակ տարրերը: Հանդաբերդի վանքում կիրառվել է տափակ կղմինդրի սեղանաձև տարբերակը: Փորակավոր կղմինդրը կիսագլանաձև է՝ նեղացող վերին ծայրով, կողին ունի բլթակաձև ելուստ, որ նեցուկ էր ծառայում նույն ձևի վերին կղմինդրի համար: Հանդաբերդի վանքի տարածքից հայտնաբերվել են այդպիսի կղմինդրի մի քանի տեսակներ: Ծածկերը կազմվել են տափակ և փորակավոր կղմինդրների համադրությամբ կամ միայն տափակ ու փորակավոր տարրերն համադրող կղմինդրներով: Նախատեսվում է տանիքները ծածկել պահպանված կղմինդրների նոր պատրաստված կրկնօրինակներով (նկ.5):

Զանգակատունը Հանդաբերդի վանքի ամենաուշ կառույցն է՝՝ ժամատանը կցված արևմտյան կողմից: Այն հատակագծում ուղղանկյուն՝ 4,9 մ պահպանված բարձրությամբ աշտարակ է՝ արևմտյան պատի մեջ բացված փոքր պատուհանով և հյուսիսային սլաքաձև մուտքով: Առաջին հարկը թաղածածկ սրահ է և դեպի ժամատան գլխավոր մուտք տանող անցումի դեր է կատարում: Այսինքն՝ զուգակցվում են զանգաշտարակի և մուտք-նախասրահի գործառույթները: Զանգակատան երկրորդ հարկից պահպանվել են հյուսիսարևմտյան և հարավարևմտյան անկյունների շարվածքները: Ըստ երևույթին այդպիսին են եղել նաև մյուս անկյունները: Պահպանված հատվածները թույլ են տալիս վերականգնել երկրորդ հարկը՝ վերցնելով երկթեք ծածկի տակ: Մեր առաջարկում այս ծածկի վրա բարձրացնում ենք ռոտոնդա: Վստահաբար այդ մասին խոսել հնարավոր չէ՝ թերի պահպանվածության պատճառով, առավել ևս, որ զանգակատները չունեն կանոնիկ մշակված ճարտարապետական ձև և յուրաքանչյուր մասնավոր դեպքում դրանք տարբեր և ինքնատիպ լուծումներ ունեն: Մենք հակված ենք ընդունել ռոտոնդայի առկայությունը, քանի որ այս դեպքում է, որ զանգակատունն իր բարձրությամբ զգալիորեն կգերազանցեր մնացած ծավալները և կաշխուժացներ համալիրի միապաղաղ ուրվագիծը (գծ.3):

Հյուսիսային՝ առանձին կանգնած **մատուռը** հատակագծում ներսից խաչաձև, դրսից ուղղանկյուն ոչ գմբեթավոր կառույց է: Արևելյան խաչաթևը հատակագծում կիսակլոր է և որպես «ավագ» խորան է ծառայել, մյուսները ուղղանկյուն են: Ավագ խորանում՝ պատի հարավ-արևելակողմում խորշ է բացված: Հյուսիսային և հարավային խաչաթևերը ծածկված են թաղով: Արևելյան, արևմտյան և կենտրոնական մասը վերցված են

մի ընդհանուր ցածր, կիսակլոր թաղային ծածկի տակ: Մուտքն արևմուտքից է և ունեցել է բարավորի սալածև արձանագրակիր քար: Շաղախի մեջ պահպանվել է քարի տեղը, իսկ քարն ընկած է մուտքից արևմուտք՝ թմբի լանջին: Լուսավորության միակ աղբյուրը մատուռի մուտքն է: Պատուհանները բացակայում են: Ակնհայտ է զանգվածեղ պատերի, թաղածածկի և ներքին սահմանափակ տարածության անհամապատասխանությունը: Հյուսիսային և հարավային խաչաթևերի մեջ ուղղանկյունաձև փոքրիկ կառուցումներ կան՝ իրագործված հին, շքեղ պատկերաքանդակներ կրող խաչքարերով, որոնք ինքնատիպ ծիսական միջավայր են ստեղծել:

Հյուսիսային առանձին կանգնած մատուռի վերականգնումը հիմնականում վերաբերում է նրա արտաքին ծածկին, քանի որ պահպանված է ներքին թաղածածկը: Պեղումների ընթացքում մատուռի շրջակայքում կղմինդրի բեկորներ և ծածկասալեր չեն գտնվել: Ի սկզբանե մատուռը կարող էր նույնիսկ տոփանված հողածածկ ունենալ: Մեր առաջարկում ծածկը երկթեք, պարզագույն սալածածկով է նախատեսվում: Սալածածկը նախատեսվում է կառույցի ջրահեռացման խնդիրները, կայունությունն ու դրանով երկարակեցությունը ապահովելու նպատակով: Սալահատակ է նախատեսվում նաև մատուռի մուտքի դիմաց: Մուտքի բարավորի՝ շինարարական արձանագրությունը կրող ընկած քարը տեղադրվում է իր տեղում: Վերականգնման աշխատանքների ընթացքում պետք է նորոգվի և իր տեղում՝ մատուռի ներսում կանգնեցվի հարավային խաչաթևի խաչքարը:

Պեղումներով բացվել են մատուռի մուտքից դեպի հյուսիս և հարավ ձգվող հենապատերը, որոնք 1,7 մ մետրով ցածր են վերևում տարածվող տապանաբակի նիշից:

Ճարտարապետական համալիրի վերականգնման հայեցակարգը բովանդակում է նաև շրջակա տարածքի և միջավայրի կազմակերպման առաջարկներ: Հանդաբերդի վանքի հուշարձանախումբը անբաժանելի մասն է կազմում այն գեղատեսիլ բացատի, որտեղ այն տեղադրված է: Լանդշաֆտն անխաթար թողնելու և միաժամանակ տարածքը կազմակերպելու միտումը ենթադրում է հետիոտնային անկանոն սալարկված արահետներ կառուցել վանական համալիրի տարածքում՝ հիմնականում պահպանելով կանաչապատ տարածքները: Որոշ տեղերում կենտրոնացվում և ցուցադրվում են միջնադարյան գերեզմանոցի տարածքում ցաքուցրիվ եղած խաչքարերը (գծ.4): Ամբողջացվում է նաև տապանաբակը պահող հենապատը, որի առջև՝ հյուսիսային առանձին կանգնած մատուռի մուտքի երկու կողմերում նախատեսվում է կանգնեցնել պեղումներով հայտնաբերված առավել դիտարժան խաչքարերը:

Զրահեռացման և բարեկարգման նպատակով սալահատակ է նախատեսվում նաև շինությունների հիմնական խմբի շուրջը (նկ.6):

Նկ.1. Հարավային կցված մատուռի թաղի ամբողջացումը:

Նկ. 2. Վանքասարի վաղքրիստոնեական եկեղեցին:

Նկ. 3. Հանդաբերդի վանքի տեսքը պեղումներից առաջ:

Նկ.4. Հանդաբերդի վանքի շինությունների հիմնական խումբը պեղումներից հետո, տեսքը հարավից:

Նկ. 5. Շինությունների հիմնական խմբի վերականգնման առաջարկ, տեսքը հյուսիսարևելքից (եռաչափ մշակումները Լ.Կիրակոսյան, Դ. Նահատակյան):



Գծ. 1. Շինությունների հիմնական խմբի հյուսիսային և հարավային ճակատները (վերականգնում):



Գծ. 2. Գավիթ ժամատան ծածկի վերականգնումը:



Գծ. 3. Զանգակատան արևմտյան ճակատի վերականգնումը:



Գծ. 4. Վանքի գլխավոր հատակագծի բարեկարգում:

Նկ. 6. Հանդաբերդի վանքի տեսքը արևմտյան կողմից՝ պեղումներից հետո և վերականգման առաջարկում:

Резюме

Благодаря комплексному исследованию Андабердского монастыря стало возможным представить концепцию реставрации ансамбля. Учитывая уровень сохранности памятника предлагается версия целостной реставрации, а для колокольни и главной церкви дается еще и реконструкция. Рассматривается возможность благоустройста окружающей среды.

Summary

Due to the complex investigation of Andaberdsk monastery it became possible to introduce the restoration concept of the ensemble. Taking into consideration the preservation level of the monument, is proposed the complete restoration version, and a reconstruction is needed for the belfry and the main church. The possibility for the improvement of the environment is studied.